

**ԱՍՈՐԻՔԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ. ***

Եղեսիայի նախկին կրօնքն էր երկնային լուսաւոքներին երկրպագութիւն մատուցանել, Բէլի և Ներովի (Դագով) մասին խօսքը, կարծում եմ, ծագում են Հին Կտակարանից [Ես. ԽԶ. 1.] և ոչ պատմական յիշողութիւններից. բայց կարող ենք հաստատել, որ Մաքրօգ—Յերապօլսի բնակիչները պաշտում էին Տմբ'աթօային, իսկ Խառանի բնակիչները երկրպագում էին Բաթ-Նիկալ կոչւող կուռքին: Մօտիկ ժամանակներս զր. Հարրիսը հաւաքեց մի կարգ ստոյդ տեղեկութիւններ, որոնք յայտնում են, թէ հեթանոս Եղեսիան պաշտում էր երկնային Երկորեակներին և թէ, ի պատիւ՝ այդ աստղը զրոշմուած է Եղեսիայի դրամների վերայ: Աղդայի վարդապետութիւնը, թէև չի խօսում ուղղակի Երկորեակների մասին, բայց յիշում է որ երկրպագութիւն էր մատուցում արեգակն և լուսին, Վեներային և Զողիակոսի նշաններով երեցած զօրութեանը: Զարմանալի է նոյնակս և այն, որ վարդապետութիւնը չի յիշում Միջնաբերդի երկու մեծ սիւները, որոնք մինչև այսօր էլ Ուրֆայում սքանչացնում են տեսնողներին: Ցանկութիւն ունենք մեր ապագայ դասախոսութիւնների մէջ նկատողութեան առնել Աղդայի վարդապետութեան այն տեղերը, որոնք խօսում են Հին և Նոր Կտակարանների ասորական հին կմոնների և այն կեանքի եղանակի մասին, որ վարում էին քրիստոնեայ դարձածները, բայց Եղեսիայի եկեղեցու պատմական հոսանքի այժմիկ քննուող հարցի ամենազլիսաւոր մասն է վարդապետութեան եղբակացութիւնը: Նրա մէջ գտնում ենք այն՝ նշանաւոր զրոյցը, թէ Աղդայը մեռաւ խաղալ և պատուվ հաւատացեալ Արգար թագաւորի օրով և թէ Աղդայի յաջորդը եղաւ նրա աշակերտ Աղդայը: Աւելի յետնագոյն Վկայութիւններից մի քանիսը նրան մարտիրոսութեան պսակ են վերագրում. բայց խաղաղ մահը, որի մասին կարդում ենք այստեղ, այն է ցոյց տալիս, թէ յիրաւի պատմական տարը է բովանդակում մեր զվարաւոր գոկումնատի մէջ: Բայց Աղդայը տանջանքի ենթարկուել է: Արգարի որդիներից Մահուն հաւատացեալ չէր:

*.) Տես Արարատ սոյն թիւ № 5, եր. 464:

և երբ Ազգայը հրաժարուեց շինել նրա համար հեթանոսական խոյք, որպիսին առաջ շինում էր նրա հայր Աբգարի համար, Մա՞նուշ ուղարկեց փշրելու Ազգայի ոտները այն ժամանակ՝ երբ վերադիմու եկեղեցում էր: Ազգայը մեռաւ և թաղուեց եկեղեցում այր և կին մարդկանց տեղերի միջև: Նա անակնկալ մեռաւ և չկարողացաւ ձեռնադրել իւր յաջորդ Պալուտին, այսպէս որ, վերջինս հարկադրուեց զնալ Անտիոք ձեռնադրուելու համար, և այստեղ նրան ձեռնադրեց Անտիոքի եպիսկոպոս Սրապիոնը:

Այստեղ ժամանակագրական սխալը այնքան ակներև է, որ հասարակ վրիպման մասին խօսք լինել չի կարող: Եւսերիոսի եկեղեցական պատմութիւնից (գ. 12.) մեզ յայտնի է թէ Սրապիոն անտիոքացին, որպէս օրթոդռքս զրող և չորս կանոնական Աւետարանների ախոյեան, ժամանակակից էր ո. Իրենէոսին: Սրապիոնը Անտիոքի եպիսկոպոս ընտրուեց 190 թ. և թեմը կառավարեց մօտ 21 տարի: Եթէ այնուամենայնիւ Սրապիոնն է ձեռնադրել Պալուտին, ուրեմն ոչ Պալուտը կարող էր 72 աշակերտների մէկի միջոցով քրիստոնեայ դարձած լինել և ոչ էլ Աբգար թագաւորը, որի թագաւորութեան ժամանակ ապրում էր Պալուտը, կարող էր մեր Տիրոջ ժամանակակից լինել:

Հստ այսմ Ազգայի վարդապետութեան մէջ քրիստոնէութիւնը Եղեսիայում երևալու մասին երկու տեսութեան հնք հանդիպում: Մի տեսութեամբ՝ որ հիմքն է կատարած իրողութեան, քրիստոնէութիւնը երևել է Եղեսիայում մեր թուականութեան առաջին դարում. միւս տեսութեամբ՝ որ յայտնի է զրոյցի Եղբակացութեամբ, Եղեսիայի քրիստոնեայ համայնքի երրորդ ներկայացուցիչը մինչև Քրիստոսի 200 թիւը ձեռնադրուած չէ Եղել և ինքն քրիստոնէութիւնը երկրորդ դարի կիսից շատ առաջ չէ կարող հասած լինել այդ զրութեան:

Ազգայի վարդապետութեան պատմութիւնը գործնապէս շարունակում է երկու գոկումնենաներով, որոնք կոչւում են Գործք Շարբելի և Մարտիրոսութիւն Բար-Սամեայի: Բար-Սամեան յիշում է Ազգայի վարդապետութեան մէջ, և գիտենք, որ նա Եղեսիայի եպիսկոպոս դարձաւ Պալուտի յաջորդ Աբշելամայից յետոյ: Քրիստոնեայ եպիսկոպոս Բար-Սամեան Բէլի և Ներովի գլխաւոր քուրմ Շարբելին քրիստոնեայ դարձրեց: Բար-Սամեան ու Շարբելը կալանաւորուեցին: Շարբելը խիստ տանջանքի ենթարկուելուց յետոյ նահատակուեց, Բար-Սամեան պատրաստում էր նոյն վիճակին ենթարկուել, երբ կայսրից հրովարտակ (ՏԵ) եկաւ հաւատի համբերողութեան մասին և Բար-Սամեային աղատ թողին: Բար-Սամեայի տանջանքների մասին զրոյցի մէջ նորից գտնում ենք, որ Պալուտը ձեռնադրուել է Սրապիոնից և ըստ

ալսմ իմանում հնք որ Բար-Սամեան ապրում էր Փաբիանոս Ապագի օրով որը 250 թուին Քրիստոսի Դեկոսի հալածանքների ժամանակ, տանջանքի ենթարկուեց: Բայց ուրիշ տեղ, այս իսկ դոկտորնեաների մէջ կայսրը Տրայանոս է կոչում, իսկ հալածող դատաւորը՝ Լիգանիոս կամ Լիովիանոս, հաւանօրէն Եղեսիայի նախին գիտաւոր կառավարիչը: Վերջին ժամանակներս գերազանցում է այն կարծիքը, թէ այս՝ Տրայանոսի օրով էր: Ժամանակագիր Միքայէլ Ասորին, որ Աստիորի Յակովեանների պատրիարքն էր ԺԲ. գարում, նրա թագաւորութեան ժամանակին է զնում Շարրելի և Բար-Սամեայի տանջանքի մատնուելը, բայց Միքայէլն էլ է անձառութիւն գործում աւելացնելով, որ նոյն ժամանակին տանջանքի է ենթարկուել նաև քաղկեդոնացի Եւփիմեան, մի իրազութիւն, որ տեղի է ունեցել 307 թ. Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ: Անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այս ապշեցուցիչ ժամանակադրական սխալը, որ գործում է Մինայէլը Բարդեսանի մասին զրոյցի մէջ:

Շարբելի և Բար-Սամեայի մասին զրոյցի մանրամասնութիւնները, աւելի ճշտիւ քննելիս, երեւմ են հակապատմական Շարրելը, որ նորադարձ հեթանոս քուրմ էր, ոչ միայն քրիստոնեայ հերոսների պէս հայոցում է հեթանոսական կուսքերին, այլ և սպազմուից ու մարդարէութիւններից հատուածներ է յիշում, որպէս թէ նա վաղուց հետէ ծանօթ լինէր ս. Դրբին: Տանջանքները, որոնց ենթարկուեց, անտանելի ծանր էին, բայց այնուամենայնիւ, չին խանգարում, որ նա դիմէր դատաւորներին բաւական Ընդարձակ ճառերով: Իրեւ եղբակացութիւն պատմում է, որ հաւածանքը գաղարեց, որովհետեւ Հոռվմում երկրաշարժ եղաւ՝ երբ հալածւող քրիստոնեանները տարան իրանց հետ ս. Պետրոսի և ս. Պողոսի մասունքները: Հոռվմայեցիք երկրաշարժը տեսնելով թախանձեցին քրիստոնեաններին մնալ: Երկրաշարժը դադարեց և ըոլորը, թէ հրէանները, թէ հեթանոսները հաւատացին Քրիստոսին: Պարզ է, որ փաստերի այսպիսի խեղաթիւրումն պարունակող դռկումները չի կարող հաւատ ներշնչել:

Բաց թողնելով մի քանի պարիներ՝ մենք վերջապէս ընկնում ենք իսկական պատմութեան շրջանը: Ասորական հին կալենդարի մէջ, որ առաջին անգամ հրատարակեց Աթայտը 411 թուի ձեռագրի համեմատ, նոյեմբերի 15-ին՝ գտնում ենք Սամոնաս և Գուրիասի յիշատակը, իսկ սեպտեմբերի 2-ին՝ Արիբա սարկաւագի: Այս հին կալենդարը կամ վկայաբանութիւնը չի յիշում Շարբելին ու Բար-Սամեային նոյնպէս և Ազգային մի հանգամանք, որ ցոյց է տալիս թէ Եղեսիայի այս առաջին մարտիրոսների յարգութիւնը չի պատկանում պատմական հաստատուն:

սովորութիւններին։ Միւս կողմից Սամոնասի, Արքիրայի և Գուհասի տօնը բնաւ կանցառութեան չէ արռակը Ասորոց հկեղցում։ Սամոնասի ու Գուրիասը գլխաւոռուել են Դիսկղետիանոսի հալածանքների առաջին օրերում։ 297 թուին իսկ Արքիրան կենադանւոյն այրուել է Լիկիանոսի օրով 309 թուին, հաւատի ազատութեան¹⁾ հրովարտակից մի քանի տարի առաջ։ Այս ժամանակ Եղեսիայի եպիսկոպոսն էր Կոնս. Նա մեռաւ 313 թուին քրիստոնէութեան դէմ հալածանքը վերջանալուց յետոյ Նրան վերաբրուեած մեծ գործը, մեծ եկեղեցու հիմնարկութիւնն է, որ աւարտեց նրա յաջորդ Սամաղը, որ մեռաւ 324 թուին։ Ցայտնի չէ թէ Կոնը հալածանքի ժամանակ ինչպէս ազատութեց մահից։ Գուցէ նա թաք էր կացել գուցէ դամաւորները վախճանում էին

4) Գուրիասի եւ Սամոնի «գործերի» ասորական բնագիրը շատ ժամանակ չէ, որ գտաւ Երուաղէմի պատրիարք Ռահմանը եւ հրատարակեց «Acta S. Confess. Gurias et Schamonaes. Romae. 1899. B. 2. Այժմ, այն անձինք, որոնք հիշարքը ում են Գուրիասի, Սամոնասի եւ Արքիրայի նահատակնեանց գործութեամբ, պէտք է որ առանձին իմն հիշարքը ըին ունենան դէմի այդ ժողովակուն։ Die Akten der edessenischen Bekenner Gurjas, Samonas, und Abibas aus dem Nachlass von Oscar von Gebhardt herausgegeben von Ernst von Dobschütz (Texte und Untersuchungen, B. XXXVII, H. 2. Leipzig 1911),—ժողովածու, որի մէջ հրատարակուած են 4, Գուրիասի, Սամոնասի եւ Արքիրայի նահատակնեան գործերը, ասորերէնից գերմաներէն բառացի Շարդմանու Թիամբ, աւելի միշտն ասելով՝ բնագրի վերջին հրատարակու Թիւնից. 2. Նոյն գործերի ասորական աւագին խմբագրու Թեան յունարէն հին Թարգմանու Թիւնը. 3. ասորական երկրորդ խմբագրու Թեան յունարէն հին Թարգմանու Թիւնը. 4. յունարէն անացին Թարգմանու Թեան յետնագոյն փոփոխութիւնը եղեւսական նահատակների կատարած հրաշների մասին զրոյցները կցած. 5. Մետաֆրաստեան գրոյցը նրանց գործերի եւ հրաշների մասին. 6. Գուրիասի եւ Սամոնասի յունարէն հին գործերի լատիներէն Թարգմանու Թիւնը. 7. Կապաղովկիայի Կեսարիայի Արեթա եպիսկոպոսի (Ժ. դար) Ներքնդը ի պատիւ երեք սրբերի. 8. Վկայարանական մի քանի մանր Նկատողութիւններ, որ կազ ունեն յունական այս կամ այն բնագրի հիտ. 9. Marthyrologium romatum-ից համառօտ հատուածները Ժողովածուի մէջ մտել են Գուրիասի, Սամոնասի եւ Արքիրասի վարքագրու Թեան մասին հին եւ միջին դարի աւելի կարեւոր բոլոր բնագրերը։

Առօս Թարգմանչի այս ծանօթութեան պէտք է աւելացնենք, որ կայ յիշեալ սրբերի եւ հայերէն վարքագրութիւնը, որ հրատարակել է Մայր Աթոռի միարան դպիր Գուրիասի, Սամոնասի եւ Արքիրասի վարքագրու Թեան մասին հին եւ միջին դարի Կալուստ Տէր Մկրտչեակը,

8. Ա. Ե.

քանտարկել քրիստոնեաների շըջանում այնքան նշանաւոր անձեռին, երկնչելով ապստամբութիւնից: Յամենայն դէպս, կարևոր է այն հանդամանքը, որ Սամոնասի և Գուրիասի նահատակութիւնը նկարագրողը, որ Կոնի ժամանակակից է, նրան ոչ գովում և ոչ պարսաւում է:

Կոնի ժամանակից սկսած եպիսկոպոսների անունները ուշադրութեամբ զրուած են այն գոկումենտի մէջ, որ Եղեսիայի ժամանակագրութիւն¹) է Կոչւում: Կոնի և Խարբրութայի միջն Եղեսիայի աթոռը բռնեցին ինն եպիսկոպոսներ: Դրանցից Սամոփի յաջորդ Այտալահան (Այիթալէս) մասնակցեց 325 թ.²) Նիկիայի տիեզերական ժողովին: Վերջին եպիսկոպոսներից մէկն էր արիանոսական ների հալածած Բարսեսը. Եղեսիայի Ռուբրուլա եպիսկոպոսի 412—435 թ. զործունէութիւնը ինկատ կառնուի հետևեալ գլուխներից մէկում: Նրա եպիսկոպոսութիւնը ասորական եկեղեցու պատմութեան մէջ զլիսաւոր սահմանն է: Նրա իսկ ժամանակ հին հերետիկոսական վարդապետութիւնները անհետանում են և կազմւում են միարնակների ու Նհստորականների նոր կուսակցութիւնները: Ռաբրութայի վարչութիւնը Աստուածպաշտութեան կարգերի և եկեղեցական կարգապահութեան վերաբերութեամբ վերջ է դնում հին և սկիզբն՝ նորին:

Այստեղ անհրաժեշտ է, թէև համառօտակի, նկատել մի կարևոր դէպք Ք-ը դարի ընդհանուր պատմութիւնից: Հոների արշաւանքը հիւսիսից 395 թ. ժողովրդական պատուհաս հղաւ. մինչև անգամ քրիստոնէական օրհներգութիւնների մէջ այդ մասին յիշատակութիւն կայ: Թէև քրիստոնէական եկեղեցու ընդհանուր զարգացման վերաբերութեամբ ազդեցութիւն չունեցաւ այն, սակայն հասարակական բոլոր դասակարգերի վերայ հաւասար ուժով ներգործեց: Նա ազդեցութիւն ունեցաւ, անկասկած, ասորական

1) Առաջին անգամ հրատարակել է Առաքմանը Bibliotheca Orientalis Clementino—Vaticana, I (Romaes 1719) 588—447, իսկ այսուհետեւ զերմաներէն Թարգմանութեամբ Քալիկերը Untersuchungen über die edessenissche Chronik-ում (Texte und Untersuchungen IX, 1. Leipzig 1892): Նրա անզիներէն Թարգմանութիւնը տե՛ս Journal of Sacred Literature 1864, V, 28 եւ շարունակութիւն: Ժամանակագրութիւնը, յիրաւի սկսում է անկապ հատուածներով Սոլեւկեան 480 Թուականից, աւելի մասնամասն է դառնում 545 թ. եւ վերջանում է 540 թ.. Տես Արյոտ-Կոկովցով. Կրաτիկ очеркъ истории сирийской литературы. С. Петербургъ, 1902. երես 70—74.

2) Բեշենեւիչ. В. Н. Синайскій списокъ отцовъ Никейскаго первого вселенскаго собора. С. Петербургъ, 1908. եր. 293 . . .

եկեղեցու աստուածաբանութեան և պատմութեան վերայ: Այդ պատերազմը ընդմիջումներով շաբունակուեց 347—363 թիւը և Յուլիանոսի յաղթուելովս ու մահուամբ հռովմայեցոց համար չարաբաստ վերջ ունեցաւ: Կայսերութիւնը յանձնեց Մծրինն ու բոլոր գաւառը, որը Օսրոինի միւս կողմումն է: Ա. Եփրեմի խրատների մէջ լսում են սարսափի արձագանքներ, որոնցով արևելքի քրիստոնէութիւնը առաւ ամօթալի լուրը: «Վիշտը հարկադրում է ինձ խօսել», գրում է նա, «հրամանը պատուիրում է ինձ լոել»: Պէտք է ասեմ, որ ս. Եփրեմը միշտ օգտում էր դէպքից Եղեսիայում իւր ունկնդիրներին զգուշացնել սպառնալով նրանց Մծրինի դրութիւնը, որը, նրա կարծիքով, կորաւ իւր բնակիչների անհոգութեան, պճնասիրութեան, անպատշաճ պարերի հետեանքով:

Բայց եկեղեցական պատմութեան ժամանակակից պատկերը չէինք ունենայ, եթէ այդ պատմութիւնը կազմուած լինէր օգտուելով միայն քարոզներից: Սասանեան միապետութեան քրիստոնեայ հպատակների համար պարսկական պատերազմը, որ տիւր ելք ունեցաւ հռովմայեցիների համար, մի դէպք չէր, որի ուսումնասիրութեան համար բաւական լինէր եկեղեցական ամբիոնից խօսուած քարոզը, այն աւելի կարեսր հանգամանք ունէր: Զորբորդ դարում պարսկական պատերազմները քաղաքական առաջին խոշոր դէպքերն էին, որին ինքն եկեղեցին ենթարկուեց: Խիստ ազգայնական, պարսկական, զօրուաստրական Սասանեանների հարստութիւնը քրիստոնէութեան թշնամի էր: Այն ժամանակից սկսած, երբ հռովմէական կայսերութիւնը քրիստոնեայ դարձաւ, քրիստոնեայ լինելը արգէն ինքն ըստ ինքեան, «թագաւորների թագաւորի» և նրա կառավարութեան աչքում ոչնչով չէր տարբերուեմ պարսկական պետութեան դաւաճանի դիրքից: Շապուհի ժամանակ պարսկահպատակ քրիստոնեայ լինելը նոյնքան դժուար էր, ինչպէս եղիսարէթի (անգլիացոց թագուհի) օրով կաթոլիկ կամ կրոմվելի ժամանակ անգլիական եկեղեցու անդամ լինելը:

Չեմ կամենում նկարագրել Սասանեանների կայսերութեան մէջ քրիստոնէութեան նսեմանալն ու անկումն. Սահմանափակում եմ միայն յիշատակելով մեծ պատերազմի փաստն ու նշանակութիւնը ասորական եկեղեցու աստուածաբանութեան վերաբերմամբ: և ապա նորից կը վերագառնամ նրա զարդացման հնագոյն շրջանի տեսութեանը: Եպիսկոպոսների անունները եկեղեցական պատմութեան ոսկրներն են, և եպիսկոպոսների յաջորդութեան շղթան, կազմելով՝ լաւագոյն դէպքում կը վերակազմենք կմախքը: Բայց այդ կմախքը վերակազմել անհրաժեշտ է, եթէ ցանկանում ենք չորսուկները կենդանացնել մարմնով, նեարդերով ու շնչով:

Սահմանած ենք ասել, որ եթէ թողնենք աւանդական յաջորդականութիւնները, ուրիշ էլ ուղիղ ճանապարհ չկայ եկեղեցական պատմութեան, ընթացքում և կեղեցու գլխաւոր պաշտօնեաների յաջորդութեանց ընդատումներ, իրեան հանելու, և եղիսիայի եպիսկոպոսների յաջորդութեան գլխաւոր քացի վերայ պարտաւոր եմ այժմ, միանգամ էլ զարձնել ձեր ուշագրութիւնը:

Հարցնում ենք ինչ էական միտք ունի զրոյցը, Պալռւոր Ազգայից է ձևանադրուել թէ Անտիոքի Սրբավեհնից, — Այս իրողաւթիւնը հազորդագ դոկումենտները, այսինքն, Ազգայի վարդապետութիւնը Բար-Ամենայի նոնաքաղաքութիւնը շարունակում ու ասում են մեջ որ ինքն Արապիոնը ձևանադրուել է Հոռվմայ Զեփիրինոսից, որ ձեռնադրուել էր իւր նախորդից ևն մինչև ո. Պետրոս Յայտնի երևում է եկեղեցիների Ծնդհանուր միտամբ, Կամենում են ապացուցանել, թէ Պալռւոր Հոռվմէական կայսերութեան մեծ եկեղեցուց¹⁾ է արածունած Պալռւոր Պետրոսի շառաւ իդն է, այս չի ասում Ազգայի և Ազգայի մասին, որոնք նրա նախորդներն էին Եղիսիայի աթոռում:

Բայց զրոյցի մեր նկատառած ձեր քոլորովին հակապառմական է Սրապիոնը Անտիոքի եպիսկոպոս էր 189 կամ 192—209 թիւր, իսկ Զեփիրինոս Հոռվմայ աթոռը ունէր 202—218 թ., և ի հարկէ, չէր կարող ձևանադրել Արապիոնին Հետևարար, աէտք է որ այլ պատճառ լինի Զեփիրինոսին յիշելու, որ ո. Պետրոսի մթոռի պնջան մի գահական էր: Համարձակում եմ կարծել, թէ այս առանձին պատճառն է այն փաստը որ Արգար Խ-րդի Հոռվմ այցեկելու ժամանակ Զեփիրինոսն էր այնտեղի եպիսկոպոսը: Բոլոր ցուցմունքները այն են ասում, որ քրիստոնեայ դարձած կամ գոնէ, դէտի նոր կրօնը բարեկամարար վերաբերուող Արգարը էր Արգար Խ-ի Եղիսիայի միայն այս կառավարիչն էր, որ գեսպանութիւն է ուղարկել Պաղեստին Ելաթերօպօլ: Յայտնի է որ Բարգեծանը Արգար Խ-ի բարեկամն էր, հետեարար, նա ենթարկում էր քրիստոնէութեան աղեցութեանը. նա վերջին Արգարներից մէկն էր և բաւական երկար ժամանակ կառավարած լինելով կարող էր նրա անձի մասին բաւական առասպեճներ յերթիւրել: Պէտք չկայ ուշագրութիւններս սրել՝ Հոռվմայ պապի աեսակցութիւնը ասիական թագաւորի հետ հարելու համար, եթէ ինքն Արգարը միայն կէս քրիստոնեայ էր, ապաքէն նրա շքախմբի մէջ, անկառակած մտնում էին Եղիսիայի եկեղեցու անդամները, որոնք վերադառնալով հայրենիք՝ հռչակած լինեն աշխարհի մայրաքաղաքի հոգ պետի զօրութեան համբաւը: Թէ այս ժամանակ Եղիսիայում

1) Տիս Արենիոսի լաւ յայտնի խօսքերը (Haer. III, 1.)

եկեղեցի կար, այդ իմանում ենք 201 թուի մեծ հեղեղի նկարագրութիւնից. այս նկարագրութիւնը կայ Եղեսիայի ժամանակապարութեան մէջ, երբ Դայսան գետի վարարմամբ միւս շէնքերի թռում և քրիստոնէական տաճարը կործանուեց:

Գուցէ Աբգարի ու Սեպտիմոս Աներոսի միջև յարաբերութիւն է զարձրել Հոռվիմի ու Անտիոքի հոգևորականութեան ուշագրութիւնը Եղեսիայի քրիստոնեալ համայնքի վերայ. բայց աւելի հաւանական է, որ զրգիշը ուրիշ կողմից լինէր, և թէ Պալուարի ընտրութեամբ պարտական էր ասորի քրիստոնեաների շարժմանը արևմտեան եկեղեցու հետ աւելի սերտ յարաբերութիւն ունենալու: Զգիտինք, և մեր աղբիւրները այնպէս չեն, որ կարողանային մեզ ասել, թէ Եղեսիայի համայնքի մէջ թուական ինչպիսի ոյժ էր ներկայացնում Անտիոքում ձեռնազրուած Պալուարը Կարծում ենք կաթոլիկներին, եթէ կարելի է այդպէս կոչել Պալուարի կողմանիցներին, սկզբում սակաւաթիւ էին: Յակովը Եղեսացոց գիտինք (VII դ.), որ ս. Եփրեմը (Ասորին + 373 թ. յունիսին) իւր մի ճառի մէջ, որ այժմ կորած է կամ վատ հրատարակուած, գանգատում էր որ օրթոգրամները իրենց Պալուարեան են կոչում: «Եղեղեցին, ասում է նա, պէտք է մարդու անունով չկոչուի այլ միայն Քրիստոսին»: Ա. Եփրեմի առարկութիւնը, թէ միայն աղանդաւորներն են իրանց հիմնազրի անունով կոչում, պատմականորէն ստոյզ է, բայց Պալուարեան կոչումից յառաջ է գալիս այն եղանակացութիւնը, որ Եղեսիայում կաթոլիկական եկեղեցին սկզբում մի աղանդաւոր հերձուած էր հիմնուած Պալուարից:

Նոյնը կարելի է եղանակացնել և այն անձանց ցուցակից, որոնք պարսկական պետութեան մէջ եկեղեցու գլխի, կաթողիկոսի կամ արևելքի եպիսկոպոսի աթոռ ունէին: Այս ցուցակը կարելի է գտնել Մեղուի գրքի¹⁾ մէջ, որ կազմել է Սողոմոն Բասրացին մի կամ երկու միմիանց նման հաւաքածուներում: Ակսում է այն Աղդայով, յետոյ գալիս է նըա աշակերտ Մարին. բայց նրանց յաջորդող Ամբրոսիոսն ու Արրահամբ ցուցակում նկատուած են որպէս եպիսկոպոսներ՝ «Անտիոքում ձեռնազրուած»: Այստեղ զարձեալ Աղդայն է համարւում եկեղեցու հիմնազրի, բայց Աղդայից պահուած շղթան շուտով ընդհատուում է և եպիսկոպոսների յաջորդութիւնը անցնում է Անտիոքին:

1) Նրա իսկական բնագիրն ու անզինքն Թարգմանութիւնը հրատարակել է Լ. Ա. Ֆեզը: The Book of the Bee. The Syriac text edited from the manuscript in London, Oxford, and Munich With an English translation. Oxford, 1886. իսկ լատիներէնը՝ Շէօնֆելդի Բամբերգ, 1866 թ. Solomonis, episcopi Bassorensis, Liber Apis. Bamberg, 1866 թ.

Մնում է դիտել զեռ մի կարևոր փաստ էլ և այն ժամանակ կամփոփենք մեր պատմական հետախուզութիւնները:

Միաբնակների պատրիարք Միքայէլ Ասորու (1199 թուին վախճանուած) ժամանակագրութիւնը¹⁾, զանազան աղքիւրներից մի քաղուածք է, որի մէջ ամփոփում են 1000 տարուայ ընթացքում, մինչև իւր կազմուելու ժամանակը, տեղի ունեցող դէպքերը, և գնահատում է ի հարկէ, աղքիւրների արժանաւորութեամբ այլ ոչ թէ միայն հեղինակի քննական հակումով: Իւր երկի գլխաւոր մասում քրիստոնէութեան առաջին երեք դարերի վերաբերութեամբ նա հիմնում է Եւսեբիոսի վերայ. բայց Եղեսիայի համար նա ուրիշ նիւթ ունի: Վերջինիս մեծ մասը մեզ արդէն ծանօթ է: Տեղեկութիւնները Աղդայի ու Աղգայի մասին նա առնում է Աղդայի վարդապետութիւնից, իսկ Բար Սամեայի ու Շարքելի մասին՝ ասորի նահատակների վարքագրութիւններից: Հետաքրքիր է, որ Միքայէլ Ասորին բոլորովին բաց է թողնում Արքասին, Սամոնասին և Գուրիասին, որոնք Եղեսիայի աղզային հերոսներն են: Բայց դրա փոխարէն նա տալիս է Բարդեծանի լրիւ կենսագրութիւնը, որ գոնէ որոշ մասերում, բղխում է աւելի հին աղքիւրից:

Նա յայտնում է մեզ, որ Բարդեծանը ծնուել է 154 թուին) Եղեսիայում, ուր նրա ծնողները պատսպարուել էին (հաւանօրէն թաքչելով պարթիւններից) և որ նա դաստիարակուել էր Յերպոլ-Մարքօնում, հեթանոս քուրմերի ձեռքի տակ: Քսան և հինգամեայ Բարդեծանը 179 թուին իւր գործերով գնաց Եղեսիա, և Աղդայի կառուցած տաճարի մօտով անցնելիս՝ լսեց Հիստասպի ձայնը, որ ժողովրդին բացատրում էր ա. Գիրք: Այս Հիստասպը յաջորդել էր Եղեսիայի իզան եպիսկոպոսին վերջինիս մահից յետոյ: Բարդեծանին դիւր եկաւ նրա ճառը և նա ցանկացաւ քրիստոնեայ դառնալ: Եպիսկոպոսը լսելով այս, նրան սովորեցրեց քրիստոնէական կրօնը, մկրտեց ու սարկաւագ դարձրեց: Այսուհետեւ զալիս է Բարդեծանի աստղաբաշխական և աստղագիտական աղանդաւորութեան քննութիւնը, և վերջը իմանում ենք, որ Հետասապի յաջորդ Ակայը, որ չէր կարողացել ուղղել Բարդեծանին իւր մոլորութիւններից, բանագրել է նրան, և թէ Բարդեծանը մեռել է 222 թ. 68 տարեկան հասակում «Երա յիշատակը նզոված լինի. Ամէն»:

1) Ժամանակագրութիւնը հրատարակուած է հայերէն Թարգմանութեամբ միայն որոշ մասերով: հրատարակել է Ֆիլորիէն (Journal Asiatique 1848 թ. եր. 284 եւ շար. եւ 1849 թ. եր. 315 եւ շար. Վ. Լանգուան հայերէն ամրողջովին Թարգմանել է Ֆրանսերէն (Chronique de Michel le Grand 1868). Արքա Շարօն Թարգմանել է ասորերէն բնագրից ամրաղջորէն . . .

Այսպէս է վերջացնում մեր ժամանակագիրը իւր պատմութիւնը:

Մեր դասախոսութիւններից մէկում նորից կը դառնանք Բարդածանին, Բայց այստեղ պէտք է նկատել որ Միքայէլ Ասորու պատմութիւնը Բարդածանի մասին՝ Եղեսիայի եպիսկոպոսների երեք նոր անուններ է տալիս մեզ, որոնք յաջորդել են Աղդային: Միւս աղբիւրները Խզանի, Հեստասպի և Ակայի մասին չեն խօսում: Դրա համար էլ ի դէպ է հարցնել, կարելի՞ է այդ անունները պատմական համարել, և եթէ այն, մեր ցուցակում ուր տեղաւորենք: Սակայն, գուցէ, աւելի լաւ կը լինէր առաջուց քննել թէ հրաեղից է առել այս անունները ինքն Միքայէլը կամ նրա աղբիւրը:

Վերջին հարցմանը պէտք է պատասխանել՝ Անթաղբելով թէ Եղեսիայի եպիսկոպոսների ցուցակը, որ տալիս է Միքայէլը, ունի՞ ինքնուրոյն արժէք, թէ այն միայն քաղուածք է այն աղբիւրներից, որոնցից օգտուել է տարեգրողը: Միքայէլը մեզ տալիս է բոլորովին որոշ տեղեկութիւն, և, եթէ ընդունենք, այս տեղեկութիւնները կարող են զգալի կերպով հարստացնել միր իմացածները: Նա Աղդային Ագգային և Պալուտին համարում է առաքեալների ժամանակակից: Նրանց յաջորդում են Արշեամա, Բար-Սամեհա՝ Տրայիանոսի օրով, յետոյ Տրդատ (Տիրիգատ), Բոզնի, Շալուա, «այլ ստրուկ», Գուրիաս, «այլ ստրուկ», իսկ յետոյ Խզանի, Հիստասպ և Ակայ: Միքայէլը «այլ ստրուկ» բառերով ինչ ունի ի նկատի, չգիտեմ: Ամբողջ ցուցակը շատ խախուտ է, և Ակայի, (որ եպիսկոպոս էր մինչև 222 թ.) ու Կոնի, որ ապրում էր Դիոկղետիանոսի օրով 297 թ.) միջև մի անուն էլ չէ տուած: Այդպիսի բացերն ու անձշտութիւնները առիթ են տալիս կասկածելու որ տարեցրող Միքայէլը ինքն կազմած լինի Եղեսիայի եպիսկոպոսների ցուցակը և թէ այդ ցուցակը կարող է լուրջ պատմական դոկումենտ լինել: Զարմանալի է, եպիսկոպոսների անունների առաջն չէ զրուած թիւը, ինչպէս այդ արուած է Հռովմայ, Անտիոքի, Ալեքսանդրիայի և Երուսաղէմի եպիսկոպոսների ցուցակում: Կարծում եմ, որ Բարդածանի պատմութեան մէջ յիշուած երեք եպիսկոպոսների անունները կարող էին ցուցակի մէջ մտած լինել Պալուտից առաջ:

Պալուտի ձեռնաղբութիւնը Անտիոքի Սրապիոնից, որ Եղեսիայի եպիսկոպոսութեան պատմութեան մէջ կենգրօնական իրողութիւն է, անտես է առել Միքայէլը: Եւ եթէ նկատողութեան առնենք այն, կը տեսնենք, որ Բարդածանի ժամանակակից երեք եպիսկոպոսները շատ յետոյ են զրուած: Միքայէլի պատմութեան մէջ յիշուում է Աղդայի անունը, բայց Պալուտի անունը չի հանդիպում: Դրա համար էլ կարծում եմ, լաւ կը լինի որ Միքայէլի

ցանկը մի կողմ զնենք, Կարող է երեալ, որ հիմք կայ կարծելու, թէ Անտիոք ձևոնադրուած Պալուտը, Եղեսիայում, տեղական քրիստոնեաների մեծամասնութիւնից համարում էր հերձուածող: Յետնագոյն աւանդութիւնը նրան Ազգայի անմիջական յաջորդն է գարձնում, իսկ աւելի հնագոյն աւանդութիւնը՝ Ազգայի աշակերտ համարում, բայց Սրբափիոնից եղիսկոպոս ձևոնադրուած. իսկապէս նա կարող էր Ազգայի և Ազգայի ուղղակի յաջորդի հակառակորդը մինել: Բարդեմանին քրիստոնեայ դարձնող Հեստասպը, կարելի է կարծել, որ մի քանի տարով մեծ է Պալուտից, բայց մեծ աստղաբաշխին նզուղող Ակայը, ըստ երկութիւն, կամ ժամանակակից է Պալուտին կամ քիչ մեծ: Մինչդեռ Եղեսիայի եղիսկոպոսների միջն այդպիսի հակառակութեան մասին մինչև Սրբանոսական վէճերը, ոչ մէկը չի խօսում, և ես աւելի հակամէտ եմ կարծելու, որ Աղդայի վարդապետութեան զրոյցը էապէս ճիշդ է, և թէ Եղեսիայի եղիսկոպոսների յաջորդականութիւնը ընդհատուել է գլխաւորապէս հեթանոսների կողմից եղած հալածանքի հետևանքով: Եղեսիայի եկեղեցու հնագոյն պատմութեան շարայարութիւնը կարելի է վերականգնել ազգիւրներով միայն, որոնք այժմհան ժամանակում մեծ մասամբ քիչ են ուսումնասիրուած: Մեր նիւթերի մեծ մասը յետին ժամանակի են վերաբերում, շատերն էլ առնուած են ոչպատմական առասպեկտներից ու առակներից: Պատմութիւն վերաստեղծելու փորձը, առանց աղբիւրները վերստուգելու, աննպատակ կը մինէր: Քրա համար էլ հաղորդեցի ձեզ գոկումնաների գլխաւոր թուականները և կցեցի նրանց մի կարգ քննական նկատողութիւններ՝ որոնց օգնութեամբ կարելի լինէր որոշել այդ թուականների արժեքը իսկ այժմ կը փորձեմ որոշել պատմութեան հիմնական գծերը, որի (պատմութեան) խեցերանքները գտնւում են մեր ազգիւրների մէջ:

Եղեսիայում քրիստոնէութիւնը առաջին անգամ երեւց հրէաների մէջ¹⁾: Մկրտում այնտեղ քարոզեց Պաղեստինցի հրէայ Ազգայը, հաւանորէն երկրորդ դարի կէսից առաջ, և Եղեսիայում

1) Օսոյինում եւ աւելի արեւելրում, մինչեւ Պարսկաստանի սահմանները, կային հրէական րազմաթիւ զաղութներ. Ե. Շուրեր (Geschicht des jüdischen Volkes im Zeitalter Jesu Christi, B. III. S. 5. ff.) կարծում է որ հրէաների թիւը այդ գաւառներում սկսոր է համարել ոչ թէ հազարներով այլ միլիոններով: Հրէական հատուածների կենդրուններն ելն Նազարէա և Մծին բաղաբները: Հմտ. Harnac A., prof., Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten. B. II. (Leipzig 1907), S. 117:

առաջին քրիստոնեայ համայնքի մէջ կար հրէական շատ տարրու Միհնոյն ժամանակ եղեսիայի ուսւեալ և բարեկիրթ հեթանոսներից շատերը յօժարութեամբ ընդունում էին քրիստոնէութիւնը, բայց այնուամենայիւ այն պետական կրօն դարձաւ երկրորդ դարի վերջից ոչ առաջ Աղդայ խաղաղութեամբ վախճանուեց եղեսիացում, բայց նրա յաջորդ Աղդայը չարչարուեց Ներա մահից յետոյ քրիստոնեայ համայնքը շարունակում էր աճել Հեստասպի զեկա վարութեամբ Կարծում եմ, որ ասորի տարեզրութեան «Իզա աին վրիպակով գրուած «Աղդայն»է, ինչ էլ լինի յամենայն դէպա, Հիստասպի ժամանակներում դէպի եկեղեցին էր դարձել Բարդեծանը, այդ մի փաստ է, որ ապացուցանում է հեթանոս աշխարհի համար քրիստոնէութեան մեծացող, հրատուրող ոյժը, Բարդեծանը ծագել էր նշանաւոր ընտանիքից և աչքի ընկնող գրող էր, և Եղեսիայի եկեղեցին է յանցաւոր, որ Հեստասպի յաջորդ Ակայի օրով հեղինակութիւն չունէր, որ իւր մէջը պահէր ասորի վիլխոտիայութեան զլիսաւոր ներկայացուցչին, Մօս 200 թուականին եղեսիայի թէ եկեղեցու և թէ պետութեան հին կարզը մօտենում էր իւր վախճանանին, պետութիւնը հոռվմայեցցոց իշխանութեան տակ էր ընկել, իսկ եկեղեցին սկսել էր կախումն ունենալ Անտիոքի եպիսկոպոսից, նոր եպիսկոպոն Պալուտը Անտիոքի Սրապիոնից էր կարգուած և, թէկ սկզբում նրա հետևողներին Պալուտեան էին անուանում, որպէս թէ այդ նոր ազանդ լինէր, սակայն նա կամ նրա յաջորդները եղեսիայում դարձան կաթողիկէ եկեղեցու ներկայացուցիչներ, այնպէս որ Պալուտին վերջերում սկսեցին նայել որպէս Աղդայի աշակերտի վերայ, Բարդեծանի հետևողները մնացին եկեղեցու ծոցից զուրս և նրանց հերետիկոսութիւնը տևեց մինչև Եղեգութիւնը, դարս, Յայտնի չէ, թէ Եղեսիայում թիւր երևեցին մարդկուսիաները բայց նրանք այստեղ կային զեռ Ռաբրուկայի ժամանակներում, չնայիլով որ թէ կաթուղիկէ եկեղեցու անդամները և թէ Բարդեծանի դպրոցը թշնամարար էին վարուում նրանց հետ, Միայն պէտք է ցաւենք, որ թէ ասորական և թէ յունական քրիստոնէական քրականութեան մէջ ընաւեխն չկայ այս շատ հետաքրքիր աղանդի նկարագրութիւնը:

Պալուտի յաջորդ Արքէամայից յետոյ գալիս է Բար-Սամեան, մի այլ նահատակ, որ տանջուեց կարծում ենք կամ Դեկոսի օրով կամ Վաղենտիանոսի օրով (250—260 թ.), Համարեա 30 տարի յետոյ եղեսիայի եպիսկոպոս զարձաւ կոնը, որ ապրեց մինչև հեթանոսների կողմից հալածանքի վերջը, չնշանակելով իրան կռապաշտութեամբ, բայց և չարժանանալով հաւատի համար նահատակութեան վառքին, Բայց նրա եպիսկոպոսութեան ժամանակ Եղեսիան առևց գոնէ երեք մարտիրոսներ, որոնք տանջումցին Դիոկետիա-

նոսի ու Լիկիանոսի օրով; Նրանց տանջանքների ու մարտիրոսական վախճանի յիշատակը դեռ թարմ էր, երբ եկեղեցին յաղթառնակեց և կարողացաւ համարձակորեն յարգել իւր հերոսներին Բար-Սամեայի մարտիրոսութեան և Աղայի մատին պատմութիւնը անկասկած, ժողովրդական աւանդութիւններից չեն վեր առնուած, այլ խօսքով, նրանք կազմուած են արուեստական կերպով, ինչպէս կազմւում է ամեն մի գիտական պատմական երկի Սամոնասի, Գուրիասի և Արբրասի վկայաբանութեան հեղինակը մասմբ գոնէ իւր անձնական յիշողութեամբ է խօսում։ Բորբոքւող կրակը, սարսափելի ծովը, և անխիզճ մշակութիւնը հանքերում չափազանց պարզօրէն տպաւորուած էին նրա յիշողութեան մէջ Կարծում եմ անհաւանական չի լինի ասել, որ նկարագրողը պահապան զինուորներից մէկն է, որ Սամոնասին, Գուրիասին և Արբրասին առաջնորդում էր Եղեսիայից գէպի տանջանարանը ⁽¹⁾, և թէ, նրանց անփեհերութիւնը դարձրեց նրան այդ վայրկեանից գաղտնի քրիստոնեայ:

Զեմ կամենում Եղեսիայի և կեղեցու արքանոսական հերետիկոսութեան պատմութիւն շարունակելի Այսօր մեր Նիւթին է եպիսկոպոսների անունները և նրանց յաջորդութեան կարգը, այդ փաստերը այն ժամանակ են նշանակութիւն ստանում՝ երբ կարողանում են օգնել հասկանալու մարդկանց պաշտպանած գաղափարը, և անունների կարգը հնարաւորութիւն է տալիս պարզ պատկերացնել գաղափարի զարգացումն կամ մաքառումն:

Եղեսիայի առաջին եպիսկոպոսների մեծ մասի միայն անուններն են մեղ յայտնի, մնացածների մասին յայտնի է այն՝ ինչ որ նրանց վերաբերութեամբ հաղորդում են Աղքայի վարդապետութիւնն ու Բար-Սամեայի գործերը, որոնք սակայն արտայացածում են յետին ժամանակի մտքերն ու վարկումնելը։ Մենք կարող ենք միայն կրկնել, որ Աղքայ և Աղքայ եպիսկոպոսները հանդիսացնում են Եղեսիայում ակլքնական քրիստոնէութիւնը, Հոռվմայ կայսերութեան յունարէն խօսող քրիստոնէութիւնից հոգով անկախ քրիստոնէութիւնը, և միւս կողմից, Պայուսակ

1) Այս դէարի մասին բոլորովին այլ կարծիքի է Գօրչչիցը, որը կարծում է, թէ Գորիխասի, Սամոնայի եւ Արիքայի նահատակութիւնն մէջ պատմական տարրը միմիայն անուններն են—որոնցով գուցէ պահ-պանուել է Գիոլկետիւնանոսի եւ Լիկիանոսի ժամանակների նահատակների մասին միշտ լիշտութիւնները—եւ տեղի ու մահուան տեսակի նկարագրութիւնը Հմտ. Texte und Untersuchungen, B. XXXVII, H. 2. S. XLV.

անուան հետ կապուած է եպիսկոպոսական իշխանութեան անընդհատ շարունակութիւնն ու եկեղեցու միավեանը համակամ լինելու միտքը. համակամութեան խորհրդանշանն է ս. Պետրոսի աթոռի շառաւեփդ լինելու ձգտումը. Սակայն Ասորոց եկեղեցու ամբողջ պատմութեան մէջ նկատում է երկու հոսանք Արևմտեան հետազօտողին երբեմն զարմացնում է այդ եկեղեցու պղգային, անկախ բնոյթը, այլ հանգաւմ անդքներում պարզ տեսնուում է ձգտում ձեռք ձեռքի տուածընթանալ յոյների հետ թէ աստուածաբանական, թէ ծէսկրի և թէ սնապաշտութեան մէջ Վերջապէս սկսում է ժօղովրդական այս երկու հոսանքների մաքառումն Ազգային տարրը նեստորական է դառնում, պարսկական սահմաններում կաղմելով լրօնական միութիւն՝ հակառակ Կոստանդնուպոլսի. Մի առ ժամանակ նրա մէջ նկատում է զարմանալի շարժում, նա իւր քառագիշներն ուղարկում է Սամարկանդ ու Տիրէթ և մինչև Զինատան ու հարաւային Հնդկաստան Յունական յետին աստուածաբանութեան աւելի համակրող տարրերը մերժում են Քաղկեդոնի ժողովի վճիռը և զրա համար էլ համարում են հերետիկոսները Երբ ազգերի գաղթականութեան ժամանակ նոր մարդարէի վայրենի հետևողները լցուեցին Ասորիք ու Միջագետք, քրիստոնեայ բնակչութիւնը չէր համակրում յունական տիրապետութեան. Միաարևնակները աւելի զերազաքացին մահմեդական խալիֆների համբերով վարչութիւնը օրթողոքս պետութեան հալածանքներից:

Թարգ. Յօւսիկ արքեպ.

ԾՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԵՇԽԱՆԴԻՍՅՈՒՄ

(Հայ տուրիստի դիտողութիւնները *)

Զ.

Տեսնելու քիչ բան կար կօննեցում. այս մենաստանը այնքան մեծ նշանակութիւն չունի. նրան իւր ստուէրի մէջն է առել Վալասմբ, որ Ծուսաստանի քաղաքականութեան և հեղինակութեան տարածողն է Ֆինլանդիայութիւնը:

Ես առաջ էլ շատ էի լսել ու կարգացել Վալասմի, նրա կալուածների ու գրքարանների մասին. և ցանկանում էի օր առաջ տեսնել այդ մենաստանու. այդ պատճառով ստիլուած եղայ բաժանուել կօննեցում երկար մելու տրամադրութիւն ցոյց տուող ընկերներից և առաջին շոգենաւով մեկնեցի Վալասմ:

*) Տես «Արարատ» № 51